

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ
ՄԱՐՏԻԿԱՆ ԱՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ

Բ. Ա. ՇԵՂԿՈՎՆԻԿՈՎ



ՀԱՅՈՒ-ԳԻՏԱՐ-Թ-ՑՈՒՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹ-ՑՈՒՆ

9(47) "XIX" 16169
5-30 5 Կիրտիկյան, Հ.
Գիտություն - Տաղավար F. G.
Եկական համական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԵԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9(47)16

ՀԱՅԻ ՊԱՐ 1 1961 թ.

Հ. ԷԼՉԻԲԵԿՅԱՆ

5-30

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ

Բ. Մ. ՇԵՂԿՈՎՆԻԿՈՎ

26/65

A T 6735



ՀԱՅՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ


1964

ՀԱՅՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պատ. Խմբագիր՝ Մ. Ներսունյան





I

Գեներալ-մայոր Բեհըռութ Մարտիրոսի
 Շելկովսիկովը (Շելկովսիկյան) պատկանում
 է անցյալ դարի երկրորդ կեսի այն ակտու-
 նովոր հայ գեներալների շաբքին, որոնք
 այնքան մեծ հոչակ ստացան ոռուսական բա-
 նակում։ Շելկովսիկովը, ծագումով Նուխու-
 հայերից, ծնվել է 1837 թվականին։ Նախ սո-
 վորել է Մոսկվայի Լ կագետական կորպու-
 սում, ապա ավարտել է Գլխավոր Շտաբի
 Զինվորական Ակադեմիայի գասթնթացը։ Կա-
 գետական կորպուսը վերջացնելուց հետո նա
 1855 թ. մասնակցել է սաղմական գործողու-
 թյուններին Կավեասում, իսկ Ակադեմիայից
 հետո՝ 1863 թ. Լեհաստանում, ուր ծանր
 վիրավորվել և պարզեատրվել է Գեորգեսիի
 Լ աստիճանի խաչով։ 1877—78 թ.թ. ոռու-
 թուրքական պատերազմի ժամանակ Կով-
 կասյան սաղմաճակատում նրա կատարած

նազմական օպերայի աճները ցույց տվին, որ
Ակադեմիայում ձեռք բերած գիտելիքները
նա կարողացավ հմտութեն կիրառել գործնաւ-
կանում:

1877—78 թ. թ. պատերազմն սկսվելու
պահին Շելկովի կովը վարում էր Սևովյան
շրջանի պետի պատասխանատու պաշտոնը:
Երկյուղ կար, որ թուրքերը կարող են ափ
գուրս գալ նաև Սևովյան շրջանում: Եվ իրոք,
մայիսի 20-ին թուրքերը փորձեցին գրավել
այդ շրջանի քաղաքներից մեկը՝ Սոչին, բայց
հաջողություն չունեցան: Հինգ ժամ շարու-
նակ քաղաքը ոմքակոծող երկու զրահակիր-
ների ողաշտպանությամբ նրանք փորձե-
ցին գեսանու հանել ծովափր, բայց զորքե-
րով ու հրանոթներով բարձված նրանց փո-
խադրանավերը չկարողացան հասնել ափը,
որովհետեւ դնդապետ Շելկովի կովի հրամա-
նատարությամբ ափում գործող ոռւսական
զորքին ուժեղ կրտկով քշեցին փոխազդո-
ւակիրը, որոնք նահանջեցին դեպի իրենց
ուազմանավերը: Հանդիպելով ուժեղ դիմա-
գրության, հետագայում թուրքերը հրամա-

վեցին Առչի գեսանտ հանելու մաքից։ Այս-
ողես, օրինակ, հունիսի 1-ին թուրքական
երեք ռազմանավ նորից մոտեցան քաղաքին,
բայց սիրտ չարին գեսանտ իջեցնել։ Ռու-
սական բանակի զլխավոր հրամանատարը
բարձր գնահատեց թուրքերի ներխուժման
փորձերի դեմ Շելկովսիկովի կատարած ռազ-
մական գործողությունները։ Նա իր հաղոր-
դագրության մեջ գրում էր, որ Շելկովսիկովը
պատրաստ է «իր զորքերով մինչև վերջին
հնարավորությունը մնալ այնտեղ, ուր կարող
է հասնել թշնամու գեսանտից առաջ»¹։

Շելկովսիկովի զգոնության շնորհիվ հա-
ջողվեց Սևծովյան շրջանն ազատել թուր-
քերի ներխուժումից, բայց նա դրանով չը-
սահմանափակվեց։ Նա պնդում էր պատե-
րազմն ավելի հուանդուն կերպով վարելու,
որով հնարավոր կլիներ Սև ծովի Կովկասյան
ամբողջ ափն ազատել թուրքական զորքերից։
Հակառակորդի կողմից գրավված առափ-

¹ „Сборник материалов по русско-турецкой
войне 1877—78 гг. на Малоазиатском театре.“ Пе-
тербург, 1903 г., выпуск IV, № 98.

նյա վայրերի, որոնց թվում և Սուխումի առ
զատազրումը դրված էր գեներալ Ալխազովի
հրամանտաւրությամբ զործող ինգուրյան
ջոկատի վրա: Այդ ջոկատը գեղի Սուխում
գնում էր հարավից, սակայն շարժվում էր
դանդաղ, որովհետեւ նա հաղթահարում էր
ինչպես թուրքերի համառ գիմաղրությու-
նը, այսպես և այդ վայրերի բնական պըժ-
վարին պայմանները:

Ծովափը հակառակորդից շուտ ազատելու
համար՝ Շելկովսիկովն առաջարկեց Սոչիից
դեպի Սուխում շարժել իր ջոկատը, իսկ
Կուբանից, Մարտիսի լինանցքով՝ գեներալ
Բաբիչի ջոկատը: Երկու ջոկատները սլիտի
միանային Դակրիի մոտ, որը զտնվում էր
թուրքերի ձեռքում, և զնային գեղի Սու-
խում: Այս զործողությունները հակառա-
կորդին կհարկազրեին ցըել իր ուժերը և դրա-
նով իսկ կթեթևացնեին սուսական բոլոր
ուժերի շարժումը դեպի Սուխում: Գնազապետ
Շելկովսիկովի առաջարկած սլանը հավա-
նություն գտավ, և երկու ջոկատները
շարժվեցին առաջ:

Շելկովնիկովն իր ջոկատով արշավանքի
դուրս եկավ հուլիսի 31-ին։ Նրան առաջա-
ղըված խնդիրը զժվարին էր, մինչդեռ նրա
տրամադրության տակ եղած ուժերը, վոք-
րաթիվ լինելու պատճառով, չէին համապա-
տասխանում առաջացրված խնդրի կատար-
մանը։ Բայց չնայած զբան, նա այդ օպե-
րացիան կատարեց չափազանց հաջող։

Շելկովնիկովի ջոկատը Սոչիից Սուխում
պիտի անցներ ծովափի և կովկասյան լեռ-
նաշղթայի անտառությունաճյուղերի չափա-
զանց նեղ ճանապարհով։ Հենց Գագրիի
մոտ նա պիտի անցներ Գագրիի նեղ լեռ-
նանցքը, որով հաղիվ երեք մարդ կարող
էին անցնել կողք-կողքի։ Թուրքերը գիտեին
Շելկովնիկովի ջոկատի շարժման մասին, և
այդ լեռնանցքը գիշեր-ցերեկ ամենայն զգու-
շությամբ պաշտպանվում էր Գագրիի ծոցում
կանգնած թուրքական զրահակրի կողմից, որը
պատրաստ էր իր ծանր հրանոթների արկե-
րով կտրել ջոկատի ճանապարհը։ Զրահակրի
հրամանատարը միանգամայն համոզված

լինելով, որ ջոկատին չի հաջողվի անցնել, հայտաբարել էր՝ «Ոչ մի ոռւս լիուների ետելը չի անցնի»:

Հասնելով այդ լիոնանցքին, Շելկովսիկովը փորձեց իր ջոկատը գեպի ֆագոթի տանել այլ ճանապարհով, բայց տնձամբ կատարած հետախուզությունը ցույց տվեց, որ ուրիշ ճանապարհ չկա և որ աննկատելիորեն պետք է անցնել հենց այդ ճանապարհով և այն էլ գիշերը:

Զոկատն սկսեց շարժվել գիշերը: Ակըզբում նա պիտի գնար լիոնային կածանով, ապա իջներ գեպի ծովափի և որոշ ժամանակ ծովափի երկարությամբ գնալով, նուրից պիտի բարձրանար գեպի լիոնանցքը տանող կածանը: Այսպիսով, ջոկատի գիշերային երթը չափազանց ծանր էր, իսկ սկսված տեղատարափն այն միանգամայն անհնարին դարձրեց: Ուժեղ անձրեի և սարսափելի մթության պատճառով գժվար էր առաջ շարժվել: Շուտով ճանապարհն այնքան վատացավ, որ հարկ եղավ հեծելազորը, հրետանին և գրաստաբեռները վե-

բաղաբանել այնակը, ուր առաջ կանգնած
էր ջոկատը։ Շելկովնիկովն առաջ էր շարժ-
վում միայն հետևակի դլուխն անցած, բայց
հետևակն էլ երկար չկարողացավ իր ճանա-
պարհը շարժնակել, որովհետեւ անտառում,
որի միջով զնում էր նա, խավարի և
անձրեսի պատճառով ոչ մի քայլ անել հնա-
րավոր չէր, թեև անձրեն ու խավարը նպաս-
տում էին լեռնանցքով աննկատելիորեն տուած
շարժվելուն։ Ամբողջ գիշերը դինվորները
մնացին անտառում՝ հրացաններին հհնվուծ։
Դիշերային այդ երթի մասնակիցը գրում
է, «Հետևակը դեռ շարժվում էր, բայց, վեր-
ջապես, կանդ առաջ և, տեղատարափ անձ-
րեսի տակ, անտառում, հնաց այնտեղ, ուր
հորդ անձրեը բռնել էր նրան, ոպասեց
մինչև լույսը բացվելը, որ հնարավորու-
թյուն ստանա այդ խորխորատից դուրս
գալու... Ոչ պառկել և ոչ էլ նստել հնարա-
վոր չէր, ամեն ինչ թաց էր, մարդկանց
վրա ամեն ինչ թրջված էր, կածանից դուրս
գալ չէր կարելի—անդունդը գլորվելու վը-
տանգն առկա էր, մարդիկ զգույշ էին, բա-

բերախտաբառը, անձրեից պաշտպանվելու
համար որևէ տեղ փնտռելու սխակ չէին առ
նուռաց¹:

Կուսաբացին պարզվեց, որ դրահակիրը
կանգնած է իր տեղում, հետեապես և ցե-
րեկը լիոնանցքն անցնել հնարավոր չէ, ուստի
Շելկովսիկովը որոշեց Գագրիի վրա գրոհել
գիշերը։ Հոգնած մարդիկ այժմ կարող էին
հանգստանալ։ Հեծելազորի և հրետանու ետե-
վից սուր համակներ ուղարկվեցին՝ հրամա-
յելով գիշերը միանալ ջոկատին։

Կիս գիշերին Շելկովսիկովը ձեռնամուխ
եղավ գործողությունների իր կազմած պը-
լանի կատարմանը։ Հեծելազորն ու հրետա-
նին տակագին չէին հասնել ջոկատին, սա-
կայն ժամանակը չէր սպասում, և նա որո-
շեց Գագրիի ամրությունները գրոհել միայն
հետեակի ուժերով։ Բայ պլանի՝ նրա սա-
կագամարդ ջոկատի մի մասը պիտի շրջան-
ցեր հակառակորդի ամրությունները և

¹ „Тифлисский Вестник“ № 201, 17 սեպտեմ-
բերի 1877թ.։

կարեր նրա նահանջի ճանուարնը, իսկ
մյուս ժառը լեռնանցքից դուրս գալով՝
ճակատից պիտի հարձակվեր հակառակորդի
վրա, այլիս ուշադրություն չդարձնելով
դրահակը կը ակին:

Կարծես թե զուշակելով, որ շրջակայքում
ինչ որ վատ բան է կատարվում, զբահակիրն
սկսեց մերթ ընդ մերթ կրակել: Շրջանցը
կտտարելու համար նախանշված զորամասը
բարեհաջող կերպով լիռնանցքից դուրս եկավ,
բայց չկարողացավ ժամանակին համնել նշա-
նակված տեղը և կատարել իր վրա զրված
խնդիրը: Աեւնանցքը բարեհաջող կերպով
դուրս եկավ նուև ճակատից գրոհող զորքերի
մի մասը, որն անսովուկ ու աննկատելի-
որեն սողաց դեպի հակառակորդի ամրու-
թյունները և ռուռաց գոչելով՝ հարձակվեց
հակառակորդի վրա: Մակայն մյուս զորա-
մասը, որի հետ էր և Շելկովսկովը, դեռևս
չէր հասել զրոհող իր ընկերներին, երբ զրա-
հակիրը ուժիկ կրակ բաց արեց նրա վրա:
Մարտիկները ստիպված եղան պառկել գետ-
նին, և այդպիս մնալ մի առժամանակ, որի

ընթացքում արկերն անընդհատ թռչում
էին նրանց վրայով։ Բարեբախտաբար զբա-
հակիրը վատ էր կրակում—նշանոցը բարձր
էր վերցված, և մարտիկները չվնասվեցին։
Գիշերվա խավարը և զինվորների լսությունը
զրահակրին խաբեցին. նա գագարեցրնց կրա-
կը և զինվորներն օգտվելով դրանից, նետ-
վեցին օդնելու ամրությունները գրոհող ի-
բենց ընկերներին։

Հազիվ էր հետեակը դուրս եկել այս դըժ-
վարին կացությունից, երբ ստեղծվեց մի
այլ վտանգ։ Այդ ժամանակ լեռնանցքին
սկսեցին մոտենալ ետ մնացած հեծելազորը,
հըետանին ու գրաստաբենները, և որովհետե
արդեն սկսել էր լուսանար, ուստի Շելիոմի-
կովը մի սպաս ուղարկեց, կարգադրելով,
որ թաքնվեն ու սպասեն գիշերվան, որ-
պեսզի կարողանան անվտանգ կերպով դուրս
գալ լեռնանցքից։ Բայց արդեն ուշ էր. ջու-
կատի մեծ մասը լեռնանցքից դուրս էր
եկել և մի գեղեցիկ նշանակետ էր հանդի-
սանում զրահակրի համար, որը, նրան նկա-
տելով, նավեզը դեպի նա էր գարճել

և պատրաստվում էր կրակելու։ Մի վայրության ևս — և նավը կարող էր մի համառ զսրկով սրբել ջոկատի կեսը։ Բայց ոռւսական զինված «Կոնստանտին» նավը, որ հայտնը վեց հենց այդ ժամանակ, դրավեց զրահակրի ուշադրությունը. զրահակիրը նրա ետևից ընկնելով, մի առժամանակ հանգիստ թողեց ջոկատին. վերջինս օգտվելով հանգամանքից, միացավ հետևակին. Հետազոտում պարզվեց, որ «Կոնստանտին» նավը, կապիտան Մակարովի հրամանատարությամբ, հականավելով կովկասյան ափերի ուղղությամբ, երեացել է Գագրիի մոտ և հանդիպելով թուրքական զրահակրին, նրան դեպի ծովս է քաշել և այստեղ մարտի բոնվել նրա հետ։ Զրահակրի՝ «Կոնստանտին» նավի ետևից ընկնելը ջոկատին հանեց դժվարին դրությունից։

Գագրիի գրոհը հաջողությամբ պահպանվեց։ Գագրին վերցնելուց հետո Շելկովսիկովս այլևս չսպասեց գեներալ Բաբեչի ջոկատի գալուն և շարունակեց առաջ շարժվել։

Օգոստոսի 9-ին Պիցունդայի մոտ նահակառակորդին պարտության մատնեց։ Իսկ

11 ին, երկարատև մարտից հետո, գրավել
Գուղառւատին, չնայելով որ թուրքական
երեք ռազմանավեր կրակելով՝ ծովից օդնում
էին իրենց զորքերին:

Լիխնայում Շելկովսիկովի ջոկատը կապ-
վեց գեներալ Բաբիչի ջոկատի և գեներալ
Ալխազովի զորքերի հետ։ Այժմ սուսական
զորքերը կարող էին հարձակում սկսել Սու-
խումի վրա։ Գեներալ Ալխազովի կատարած
հատախուզությունը ցույց տվեց, որ թուրքե-
րը ամրացել են Սուխումի դիմաց գտնվող
բարձունքներում և Քելասուրի գետի աջ
ափին։ Այս գիրքերը ուղարկան զորքերի կող-
մից զրավվելուց հետո, օգոստոսի 20-ին թուր-
քերը գատարկեցին Սուխումը։ Առաջինը
քաղաք մտան Շելկովսիկովի զորքերը։

Այսպիսով, Արխազիան հակառակորդից
մաքրվեց, կովկասյան բանակի զլխավոր
հրամանատարն իր զեկուցման մեջ գրում էր,
թե «այդ արդյունքը ձեռք է բերված շնորհիվ
այն հանգամանքի», որ գեներալ Ալխազովը
և գնդապետ Շելկովսիկովը նշված նպատակ-

ները կատարել են վերին աստիճանի եռանգույն կերպով¹:

Այդ նույն զեկուցման մեջ նա միջնորդում էր՝ գեներալ Ալխաղովին պարզեատրել Գեորգիակի 4-րդ աստիճանի խաչով, իսկ Շելկովիկովին առև գեներալ-մայորի աստիճան: Շնորհավորելով վերջինիս այդ կոչումն ստանալու առթիվ, գլխավոր հրամանատարը գրում էր. «Անկեղծորեն ուրախանում եմ, շնորհավորում եմ և շնորհակալ եմ: Լիակատար շնորհակալություն Զեր Կտրիք ջոկատին»²:

Այսպես հաջողությամբ կատարեց Շելկովիկովը իր վրա գրած խնդիրը: Նովորոսիյսկի վերադառնուլուց հետո նրա գորքին ու նրան քաղաքի բնակիչները, որոնք ահա եկվել էին թուրքերի տփ իջնելու վտանգից և այժմ հանգստացել էին Արխաղիայի

¹Տես՝ „Сборник материалов...”, էջ 38.

²В. Потто, „Генерал Б. М. Шелковников“. Հագփածը զետեղված է „Братская помощь пострадавшим в Турции армянам“ ժողոված., Ա. Ֆրան., Մոսկվա, 1898 թ., էջ 326.

ազաւոավրման հետեանքով, գիմավորեցին
մեծ խանգավառությամբ։ Այն նավի ճրա-
մանատարը, որը Շելկովսիկովին և նրա ջո-
կատի վիրավոր զինվորներին Գագրիից
տեղափոխել էր Նովորոսիյսկ, այդ հանդիպ-
ման մասին պատմում է. «Ամբողջ բնակ-
չությունը ցնծությումը դիմավորեց անկեղ-
ծորեն սիրված իր գեներալին, որ հաղթա-
կանորեն վերադառնում էր Սուխումի դժվա-
րին, բայց փառապանծ արշավանքից հետո.
ծաղիկներ ու պսակներ էին տեղում գենե-
րալի և նրա հարգարժան մարտական գոր-
ծակիցների վրա»¹.

II

Սուխումի արշավանքն ավարտելուց հե-
տո, Շելկովսիկովը կանչվեց ծառայելու գոր-
ծող կորպուսում, մեծ պատերազմի ու զիմա-
րեմում, զեպի ուր նա ինքն էլ ձգտում էր

¹ Н. Баранов. „Встреча с генерал-майором Шелковниковым“. Запись о войне 1877—78 гг. в „Сборнике военных рассказов, составленных офицерами-участниками войны 1877—78 гг.“ I հատուր, Պետական գրադարան, 1878 թ., էջ 402.

հենց պատերազմի սկզբից: Այստեղ էլ նա
կարողացավ ցուցաբերել համարձակ, եռան-
չուն և ձեռներեց զորավարի հատկություն-
ներ:

Եելկովսիկովի՝ գործող կորպուս գալը
դռւզագիտեց սուսական հրամանատարու-
թյան պատրաստության՝ գրսհի ենթարկելու
Ծուխթար-փաշայի թուրքական բանակը,
որը կանգնած էր Սլաջայի՝ Կարսի սարա-
հարթի բարձունքներից մեկի վրա: Ալաջայի
թուրքական դիրքը խիստ ամբացված էր և
նրա մատուցյները դնգակոծվում էին խա-
չածե կրակով: Այդ դիրքը ճակատային գրո-
հով վերցնելը միծ զոհեր կողահանջեր, ուստի
որոշվեց թուրքերի վրա գրոհել ոչ միայն ճա-
կատից, այլև թիկունքից: Թուրքական բա-
նակի թիկունքն ուղարկվող զորքերի հրա-
մանատարության համար հարկավոր էր ինք-
նուրույն և վճռական հրամանատար: Այդ
ճակատամատում գործելու համար սուսական
բանակի դէխավոր հրամանատարի կողմից
նշանակվեց գեներալ Եելկովսիկովը, որին
հոնձնաբարվեց այն շրջանցիկ զորասյան
հրամանատարությունը, որը թուրքական

բանակի վրա սլիտի հարձակվեր թիկունքից:

Շելկոմիկովին հանձնարարված օպերացիան չափազանց պատասխանառու էր: Կազ չունենալով գլխավոր ուժերի հետ, անհրաժեշտության դեպքում նա չէր կարող որևէ տեղից օգնություն ստանալ և, այդպիսով, աղավիճան միայն իր սեփական ուժերին, նրա ջոկատը կարող էր պարտության մատնվել:

Շելկոմիկովը դիտակցում էր իրեն առաջադրված խնդրի լրջությունն ու դժվարությունը և պահանջում էր իր ջոկատն ուժեղացնել լրացուցիչ ուժերով, այդ թվում նաև հեծելազորով: Սակայն նրա այդ խընդիրը բավարարվեց ոչ ամբողջությամբ: Թուսական բանակի հրամանատարությանը մեծ դժվարությամբ հաջողվեց լրացուցիչ կերպով Շելկոմիկովին տրամադրել երեսնյան ջոկատից երկու գումարտակ հետեւակ զորք և 500 կազակ:

Մշակված պլանի համաձայն, դարձող կորպուսի գլխավոր ուժերը սեղտեմբերի

20-ին պիտի գրոհեին թուրքական բանակի ալաջյան գիրքի ձախ թեր և կենտրոնի վրա—Փոքը ու Մեծ Յաղնի լիոները և Վիզինքեի բարձունքը։ Այդ նույն օրը Շելկովնիկովը, իս հերթին, հակառակորդի վրա պիտի գրոհեր թիկունքից։

Իր արշավը գիպի հակառակորդի թիկունքը, գիպի Նախարչի լեռնաշղթան, որ Սլաջայի բարձունքներից ամենավերաժըարձն է, Շելկովսիկովը որոշեց կատարել Ալյամ գյուղի վրայով։ Այդ ճանապարհը կարճ էր, այն կարելի էր անցնել մեկ օրում —ահա այն առավելությունը, որ այդ ճանապարհն ուներ մյուս մարշրուտների նկատմամբ, բայց այդ ճանապարհն արդեն վատանգված էր, որովհետեւ սեղանեմբերի 17-ին թուրքական զորքը գրավել էր Կղըլդուլ լեռը՝ Սլաջայի թուրքական բանակի թիկունքին հսկող այդ կետը, որը և նրանք սկսել էին ամբացնել։

Սեղանեմբերի 17-ին Շելկովսիկովի ջոկատը կենտրոնացավ Աղոփաչայի ձախ ափին գտնվող կամբինոկի ոլտհակակետում։ Շել-

կոմիսիոնն այժմ պիտի որոշեր — կամ իր զորքերը տանել դեպի Նախարձի, իր թիկունքում թողնելով Կղըլգուլի թուրքական ջոկատը, կամ թե՛ իր ջոկատի թիկունքն ապահովելու համար նախապես գրավել այդ բարձունքը և ապա միայն առաջ գնալ: Եելկոմիսիոնը որոշեց վերցնել Կղըլգուլը: Պատճառաբանելով իր այդ որոշումը, նա սեպտեմբերի 18-ին կորպուսի հրամանաւտար Լոռիս-Մելիքովին գրում էր, «Մի այդպիսի ուժ թողնել իմ թիկունքում — հնարավոր չէ: Այդ նկատի ունենալով, ես որոշել եմ լուսաբացին գրոհել Կղըլգուլի վրա, որի համար և գուրս եմ գալիս գիշերը: Թեհ լիոք լավ է ամբացված և նրա երկու կարեփոր բարձունքներում մարտկոցներ են դըրված, այնուամենայնիվ կարծում եմ, որ գործը կհաջողվի առանց մեծ կորուսաների, գլխավոր գրոհը կատարելու եմ թերց և թիկունքից...»¹:

¹ „Материалы для описания русско-турецкой войны 1877—78 гг.“ Կազմել է Յոմիենը, Պահեր-բուրդ, 1903 թ., հատ. II, „Приложения“, էջ 97—98:

Սևապտեմբերի 18-ի առավոտյան Շելկովսիկովը հետախուզեց հակառակորդի գառավորութիւնները, պարզեց տեղանքի բնույթն ու բարձունքի մատուցցները, և սեպտեմբերի 18-ի լույս 19-ի գիշերն անցավ Արփաչայը: Արտղորեն անցնելով այս 8 ժիրսար, որ նրան բաժանում էր Կղըլգուլից, նա կրակ բացեց թուրքական գիրքերի վրա: Առան վրա զանվոր թուրքական գորքերը չէին նկատել Շելկովսիկովի մոտենալը, և ոռւսների կրակը նրանց համար անսպասելի էր: Բայց շուտով նրանք ուշքի եկան և իրենց հերթին հրետանային ու հրացանային կրակ բաց արին: Շելկովսիկովը հմտորեն բացազոտվեց, շուտով նրա զորքերը հրեք կողմից շրջապատեցին բարձունքը և հակառակորդի ուժեղ կրակի տակ ավելի ու ավելի մոտեցան նրա ստորոտին: Հասավ վճռական գրոհի ժամը: Ոչ ոք նրա հաջող ելքի նկատմամբ չէր կասկածում — ոչ մարտիկները, ոչ եւ Շելկովսիկովը: Բայց այդ լարված կ'ըկցանին Շելկովսիկովի գորամասը հասավ կորպուսի

հրամանատարի սուբհանդակը՝ սեպտեմբերի
20-ի մարտի կարգադրով ու խորհրդով՝
կողմնակի գործողություններ չակսել, քանի
որ Շելկովսիկովն այլիս օգնական ուժեր չի
ստանալու, ուստի և դեպի Ալաջա պիտի
շարժվել մի այլ, ավելի քիչ վատնգավոր
ճանապարհով։

Կորպուսի հրամանատարի ցուցումները
խիստ կերպով փոխեցին Շելկովսիկովի
պլանը։ Նա այժմ պիտի ընտրեր երկուսից
մեկը՝ կամ ավարտել սկսած մարտը,
վերցնել Կղըլգուլը և մարտիկներին առանց
հանգիստ տալու, իսկույն և՛թ շարու-
նակել ճանապարհը, կամ թե կատարելով
կորպուսի հրամանատարի ցուցումը, դադա-
րեցնել մարտը, նահանջել իր Կամբինսկի
ճամբարը այն հաշվով, որ կարճատեն հանգըս-
տից հետո դիշերը նորից անցնի թուրքական
բանակի թիկունքը՝ Ալաջայի բարձունքը—
մյուս օրը վաղ առավոտյան այնտեղ լինելու
համար, իր թիկունքում թողնելով Կղըլ-
գուլի թուրքական ջոկատը։ Կշռադատելով

բոլոր հանգամանքները, նա որոշեց մարտը
դադարեցնել և նահանջել իր ճամբարը:

Այդպիսի որոշումը ընդունելով, Շելկով-
նիկովը հրամայեց մարտը դադարեցնել և
նահանջել: Ծանր էր մարտիկների համար
թողնելուազագաշտը, երբ հաղթանակն ա-
պահովված էր: Դժկամությամբ թողնելով
իրենց զիրքերը, զինվորները հրաձգությամբ
սկսեցին նահանջել:

Նահանջը կատարվեց միանգամայն բա-
րեհաջող, թեև թուրքերը հարձակման ան-
ցան և սկսեցին հետապնդել ուռսական
ջոկատին: Ցերեկվա ժամը շաբան զորքերն
արդեն իրենց ճամբարումն էին:

Իմանալով, որ նահանջն անհասկանալի
է մեացել իր մարտիկների համար, Շելկով-
նիկովը, նախքան Արփաչայի մյուս ափն
անցնելը, կարեոր համարեց մի ճոռով դիմել
զորքին՝ բացատրելու նահանջի պատճառնե-
րը: «Սպաներ և զինվորներ, — ասաց նա, — զի-
տեմ, որ ձեզնից շատերը իրենց մտքում ինձ
պիտի հանդիմանեն մեք այս նահանջի համար
այն ժամանակ, երբ ամենասպանակ ջանք

գործադրելու զեպքում թշնամու դիբքը մեր
ձեռքում կլիներ: Բայց դա ևս արել եմ այն
շահնի հետևանքով, որ այդ բարձունքներն
այլս չեն մտնում մեր գործողությունների
պլանի մեջ: Վաղը մեղ սպասում է ավելի բարդ
և ավելի դժվարին գործ: Յուրաքանչյուր
մարդ ինձ համար թանգ է վաղվա օքը
խել զրոհն առնվազն հարյուրավոր մարդ-
կային կյանք կնատեր: Շնորհակալություն
այսօրվա համար, խել այժմ դնացեք տուն
և պառկեցեք քնելու, որպեսզի երեկոյան
թարմ ու առույգ ճանապարհ ընկնենք: Եռ
հայատացած եմ, որ վաղը դուք հերոսու-
թյան մի էջ կավելացնեք այն գնդերի
պատմությանը, որոնց գուք պատիվ ունեք
պատկանելու^{1:} Այս արշավանքի մասնակ-
ցի ասելով՝ Շելիովնիկովի ճառը ռոգերեց,
էլեկտրականացրեց զորքերին, որոնք իրենց
վրանիները վերաբարձան երգելով ու նվա-
գածությամբ, իրենց պարտքի կատարման
լիտկատար զիտակցությամբ^{2:}

¹ Տաս' կ. Պոտուային նշելու հոգվածը, էջ 328:

² Ржевуский. „Из воспоминаний согенчаго

Շելկովսիկովը չսխալվեց: Իրենց գիշերային բացառիկ ծանր երթով, Ալաջայի վրա սեպտեմբերի 20-ին կատարած սխրագործություններով և նահանջի ժամանակ ցուցաբերած քաջությամբ նրա ջոկատի մարտիկներն իրենց զնդերի պատմություն մեջ մի փառապահն էջ ավելացրին:

Երեկոյան ժամը 9-ին ջոկատը նորից շարժվեց: Մութ գիշեր էր և խոնավ ցուըտն ուժեղ կերպով իրեն զգալ էր տալիս: Մարդիկ, որոնք երկու գիշեր չէին քնել և հենց նոր էին մարտից վերադարձել գիշերը. 40 կիլոմետր ողիտի անցնեին մի կածանով, որ ձգվում էր խիստ կտրաված և մոտ ժամանակներում եկած անձրեներից լվացված լիռային տեղերով: Ճանապարհի վատության պատճառով Շելկովսիկովը ստիպված եղավ ամրող գաշտային հրետանին ու ծանրությունները թողնել ճամբարում, իր հետ վեցնելով միայն լեռնային հրանոթները: Դուրս գալուց առաջ Շելկովսիկովը ժողովեց առան-командира". *Տես՝ „Сборник военных рассказов...“, V հատոր, էջ 175:*

ձին զորամասերի հրամանատարներին և
նրանց բացարկեց առաջիկա գործողություն-
ների պլանը: «Խելացիորեն, խիստ հանդիսա-
կելով, առանց ավելորդ խոսքերի նա իր
կարգադրություններն էր անում, — պատմում
է այդ արշավի նույն մասնակիցը: — Յուրա-
քանչյուր լոող համոզված էր, որ այդ կար-
գադրությունների կատարման մեջ է հաղ-
թանակի գրավականը»¹: Նա դիմեց նաև
զինվորներին, բացատրելով գիշերային ար-
շավի և առավոտյան լինելիք ճակատամարտի
ամբողջ պատասխանատվությունը: «Մազա-
ներ և զինվորներ, — ասաց նա, — կարող է
թշնամու հետ մեր կոփվը վազը վերջանալ...
Մենք սակավաթիվ ենք, բայց մենք
քանակը կփոխարինենք որակով, որին իբրև
գրավական, իմ կարծիքով, ծառայում է
այսօրվա կովում ձեր բոլորի կողմից ցուցա-
բերված հերոսությունը: Մենք պիտի
անցնենք թուրքական բանակի թիկունքը,
իսկ մնացած դորքերը կգրոհեն ճակատից:
Բայց մենք մեր ճիգերը հատկապես պիտի

¹Տես՝ ԱԺԿուսկու հիշյալ հոդվածը, էջ 176:

լարենք վաղ առավոտյան լեռան գագաթից
դիրքերը գրավելու համար... Ինչ էլ ո՛ք
լինի, մենք այնտեղ պիտի լինենք շատ-
վաղ և կլինենք։ Գիտեմ, որ գուք հոգնած
եք, բայց հիշեցեք, որ ձեզնից է կախված
վաղվա մարտի հաջողությունը, և հաղթա-
հարելով հոգնածությունը, մենք կհայտնինք
այնտեղ, որտեղ թուրքերը մեղ չեն էլ
սպասում¹։ Եվ Շելկովսիկովի քաջերը,
հաղթահարելով հոգնածությունը, նշանակ-
ված ժամին եղան տեղում։

Պահպանելով բոլոր նախաղգուշություն-
ները, ջոկատն ուղղակի շարժվեց դեպի
Ալյամ գյուղը, այս անգամ Կղըլգուլի թուր-
քական ջոկատը թողնելով բավական հեռու,
դեպի ձախ։

Ճանապարհը դժվարին էր։ Հարկադրված-
էին շեղվել առանց այն էլ դժվարանցա-
նելի, անձրեների պատճառով համարյա-
անանցանելի դարձած կածանից, և գնալ
զառիթափ վայրէջքներով ու վերելքներով։

¹ Նույն տեղը, էջ 177.

Մերթ գնալով զորասյան առջեից, մերթ
դանդաղեցնելով իր ձիու քայլվածքը, Շել-
կովնիկովը քաջալերում էր զինվորներին:

Այդ երթի ժամանակ Շելկովնիկովը եր-
բեմն մտածում էր, թե կարող կլինե՞ն ար-
դյոք իր մարդիկ, որոնք կովից հետո չեն
հանգստացել ինչպիս հարկն է և որոնք զեռ
երկար ու գժվարին ճանապարհ են անցնելու,
վաղը հաջող մարտ վարել Բայց նա ամեն
անդամ իրենից հեռու էր վանում այդ աարա-
կուստնքը, որովհետեւ շատ լով գիտենալով
ուու զինվորի մարտական հատկություն-
ները, տնվերապահորեն հավատում էր նրան:
Սեպտեմբերի 20-ի ճակատամարտն ա-
պացուցեց, որ նա չի սխալվել և որ ինչպիսի
հրաշքներ կարող է զործել ուստ զինվորը:

Ալյամի մոտ նա զինվորներին կևս ժամ
հանդիսատ տվեց: Գյուղի բնակիչները, ուու
զորքի երեալուց խիստ անհանգստոցած,
ուուրհանգակ ուղարկեցին Մուխթարի փաշա-
յին հայտնելու ուու զինվորների երեալու
մասին: Բայց այդ սուրհանդակին ուու

ինվորները բանեցին, և թուրքական գըլ-
խափոր հրամանատարը ոչինչ չիմացավ Շել-
կովսիկովի մռահենալու մասին:

Եղ այսպիս, Շելկովսիկովը Կամբինսկի
պահակակետից մինչև մարտավայրը ամբողջ
ճոնապարհն անցավ Կղըլդուլում և Ալաջայում
կանգնած թուրքերից աննկատելի։ Առավո-
տյան ջոկատը կածանով բարձրացավ գեղի
Նախարչի, անակնկալ կերպով գրավեց այդ-
տեղի թուրքական պահակակետը, հրանոթ-
ները բարձրացրեց լեռների դադաթները
և կրակ բաց արեց թուրքերի վրա, որոնք
այժմ միայն նկատեցին իրենց գլխին կանգ-
նած Շելկովսիկովին։

Թուրքական բանակում խուճապ սկսվեց։
Թուրքական բանակի զիստավոր հրամա-
նատարը, Շելկովսիկովի երեալու հետեան-
քով ստեղծված գրությունից խիստ անհան-
գուտացավ և առաջին պահին չգիտեր, թե ին
անի։ Նա բնավ չէր սպասում, որ իր թիկուն-
քում սուս զորքեր կերեան։ Բնդիակառակը
Թուխթար-փառշան նման հնարավորությունից
իրեն ապահով էր համարում Կղըլդուլում և

Ինախթափասում կանդնած ջոկատների
շնորհիվ։ Ինչպես հետագայում պարզվեց,
նու ճակատամարտն արդեն տանուլ աված
էր համարում։ Եղ իրոք, թուրքական բա-
նակի գրությունը օրվա առաջին կեսում
կը իտիկական էր։ Մի կողմից՝ Յաղնի և
Հաջիվալի լեռների մոտ որոտում էին
կորպուսի գլխավոր ուժերի հրանոթները,
մյուս կողմից՝ Սուբոտանի գիմաց կանգ-
նոծ դեներալ Լազարել ամեն մի րոպե
կարող էր հարձակման անցնել, իսկ
Նախարչիկ վրա երեցած Շելկովսիկովի
ջոկատը պատրաստ էր թիկունքից հար-
վածելու։ Թուրքական բանակն այդ օրը
ճակատամարտու տանուլ կտար, եթե գոր-
ծող կորպուսի գլխավոր ուժերը, որոնք
թուրքական դիրքերը գրոհում էին ճակատից,
հաջողություն ունենային։

Երբ Շելկովսիկովի ջոկատը բարձրացավ Նա-
խարչի, որտեղից, ինչպես ձեռքի ափի վրա,
կարելի էր դիակելերկու կողմի դիրքերը, տաք
կոփլս արդեն բորբոքվում էր Փոքր Յաղնի ու
Հաջիվալիի մոտ։ Այդ օրը թուրքական Ճակ-

թել — Մեծ ու Փոքր Յաղնին — գլուհող ոռւսաւ-
կան զորքերին երկու ժամվա տաք կովից
հետո հաջողվեց զրավել Մեծ Յաղնի լեռը,
բայց Փոքր Յաղնին վերցնել չհաջողվեց՝
լեռն ամրացված էր ավելի ուժեղ, քան
կարելի էր սպասել: Եվ ահա, զլխավոր ուժե-
րի հարձակումը կանգնեցնելու հետեւանքով,
Շելկովնիկովի ջոկատը կրիտիկական գրու-
թյան մեջ ընկալի: Կապ չունենալով զլխավոր
ուժերի հետ, Շելկովնիկովը դեռևս չէր կա-
րողանում կողմնորոշվել ստեղծված իրա-
զրության մեջ: Նա զեռ սպասում էր նրանց
հարձակմանը, որպեսզի ինքն էլ հարվածի
թուրքական բանակի թիկունքին, Բայց ժա-
մանակն անցնում էր, մինչդեռ չէր երեսում,
որ զլխավոր ուժերը որևէ ջանք են գոր-
ծադրում համատեղ զործողությունների
համար:

Մինչ այդ, թուրքական հրամանատարու-
թյունը գիտակցելով, թե Շելկովնիկովի ջո-
կատն ինչպիսի վտանգ է ներկայացնում
թուրքական բանակի թիկունքում, սկսեց իր
զորքերը քաշել Շելկովնիկովի ջոկատի դեմ,

Ինախթափասում կանգնած ջոկատների
շնորհիվ Ինչպես հետազայռում պարզվեց,
նու ճակատամարտն արդեն տանուլ աված
էր համարում։ Եղի իրոք, թուրքական բա-
նակի գրությունը օրվա առաջին կևում
կրիտիկական էր։ Մի կողմից՝ Յաղնի և
Հաջիվալի լեռների մոտ որոտում էին
կորպուսի գլխավոր ուժերի հրանոթները,
մյուս կողմից՝ Սուբոտանի գիմաց կանգ-
նուծ դեներալ Լազարել ամեն մի րոպե
կարող էր հարձակման անցնել, իսկ
Նախարչիկ վրա երեցած Շելկովիկովի
ջոկատը պատրաստ էր թիկունքից հար-
վածելու։ Թուրքական բանակն այդ օրը
ճակատամարտը տանուլ կտար, և թե գոր-
ծող կորպուսի գլխավոր ուժերը, որոնք
թուրքական գիրքերը գրոհում էին ճակատից,
հաջողություն ունենային։

Երբ Շելկովիկովի ջոկատը բարձրացավ Նա-
խարչի, որտեղից, ինչպես ձեռքի ափի վրա,
կարելի էր գիտել երկու կողմի գիրքերը, տաք
կոիմն արդեն բորբոքվում էր Փոքր Յաղնի ու
Հաջիվալիի մոտ։ Այդ օրը թուրքական ճակ-

թեր—Մեծ ու Փոքր Յաղնին—գլուհող ուստա-
կան զորքերին երկու ժամվա տաք կովից
հետո հաջողվեց դրավել Մեծ Յաղնի լեռը,
բայց Փոքր Յաղնին վերցնել չհաջողվեց՝
լեռն ամրացված էր ավելի ուժեղ, քան
կարելի էր սպասել: Եվ ահա, զլիսավոր ուժե-
րի հարձակումը կանգնեցնելու հետևանքով,
Շելկովսիկովի ջոկատը կրիտիկական դրու-
թյան մեջ ընկապ: Կապ չունենալով զլիսավոր
ուժերի հետ, Շելկովսիկովը դեռևս չէր կա-
րողանում կողմնորոշվել ստեղծված իրա-
դրության մեջ: Նա դեռ սպասում էր նրանց
հարձակմանը, որպեսզի ինքն էլ հարվածի
թուրքական բանակի թիկունքին: Բայց ժա-
մանակն անցնում էր, մինչդեռ չէր երեսմ,
որ զլիսավոր ուժերը որևէ ջանք են գոր-
ծադրում համատեղ գործողությունների
համար:

Մինչ այդ, թուրքական հրամանատարու-
թյունը գիտակցելով, թե Շելկովսիկովի ջո-
կատն ինչպիսի վտանգ է ներկայացնում
թուրքական բանակի թիկունքում, սկսեց իր
գորքերը քաշել Շելկովսիկովի ջոկատի դեմ,

նրո՞նք նրա վրա ուժից կրակ բաց տրին:
Ժամը 12. ին մոտ, հրետանու հետ միասին
խոշոր ուժեր կենտրոնացնելով, թուրքերը
հարձակման անցան: Մինչև ժամի 3-ը Շել-
կովսիկովը շարունակում էր լիոնաշղթայի
վրա մնալ, հաջողությամբ ետ մղելով հակա-
ռակորդի գրոհները նրա համար մեծ կորուստ-
ներով: Մարտի ամբողջ ընթացքում Շել-
կովսիկովը գտնվում էր հակառակորդի կրակի
տակ և արիության անձնական օրինակով
ոգեսրում էր իր զորքերին, Այժմ տրդեն
պարզ էր, որ զլիապկոր ուժերի և շրջանցիկ
ջոկատի համատեղ գործողությունների այդ
օրվա պլանն այլևս չի կարող իրագործվել
մինչդեռ իրեն բախտին թողնված զորացան
մնալը եռնաշղթայի վրա՝ նդի էր մեծ վտանգով:

Մինչ այդ ջոկատը հակառակորդի կող-
մից ավելի ու ավելի էր շրջապատվում։
Արդեն ճախից հայտնված թուրքական հետեւ-
վակը հարձակվում էր թերց, մտրտիկների
շարքերն սկսել էին նոսրանալ, իսկ փամ-
փուշաները վերջանալու վրա էին։ Նկատի
ունենալով, որ բարձունքներում մնան այլես

աննողատակ է, Շելկովսիկովը հրամայեց
նահանջել: Այդ այնքան էլ հեշտ չէր միայն
իր սեփական ուժերին թողնված ջոկատի
համար: Այժմ նա պիտի զենքը ձեռքին
ինքը ճանապարհ բաց աներ իր համար:

Հենց որ ոռուական զորքերն իրենց գիրա-
քերը թողին, թուրքերը զբանք գրավեցին
և հրեաանին արտզորեն բարձրացնելով
լեռնաշղթան, ուժեղ կրակ բաց արին լեռ-
նազոգով նահանջող Շելկովսիկովի ջոկատի
վրա, իսկ թուրքական հետեւակն սկսեց հե-
տազնղել նրան: Կղը լզուլում կանգնած թուրք-
ական զորքերը, տեղեկանալով Շելկովսի-
կովի գիշերային երթի մասին, իրենց հեր-
թին; սկսեցին շարժվել նրա ջոկատի հետ-
քերավ, նրանք Շելկովսիկովի ջոկատին հան-
գիտեցին նախարչիից նահանջելու ժամա-
նակ և Ալաջայի հարավային լանջերի վրա
թիւային գիրք զրավելով, կրակ բաց արին
բարձունքներից:

Այսպիսով, Շելկովսիկովի զորասյունը նա-
հանջում էր հակառակորդի խաչածե ուժեղ
կրակի տակ և փամփուշտ չունենալու պատ-

ճառով համարյա չէր պատստիանում նրա
կրակին: Մինչ այդ թուրքական հետեւակն
ավելի էր ուժեղացնում իր ճնշումը
նահանջող ջոկատի վերջապահ գորամասերի
վրա: Փամփուշտի պակասությունը սպանե-
րին հարկադրում էր կարգավորել հրաձգու-
թյունը, գեսես փամփուշտ ունեցող զինվոր-
ներից կազմվում էին առանձին գորամասեր
և ուղարկվում վերջապահ մասում փո-
խարինելու նրանց, որոնց փամփուշտներն
արդեն վերջացել էին: Ջոկատի հեծյալները,
որոնք տակավին զինամթերք ունեին, Շել-
կովսիկովի հրամանով գարձվում էին հետեւակ
և ուղարկվում վերջապահ մասը՝ հետեւակին
օգնելու համար: «Կազակ եղբայրներ, — գառ-
նալով նրանց՝ ասաց Շելկովսիկովը, — գնա-
ցեք փոխարինեցեք հետեւակին, օդնեցեք
նրան, թուրքերին կանգնեցրեք թեկուզ
այնքան ժամանակ, որ կարողանանք դուրս
գտն այս լեռնանցքից»: Բայց կազակները
նույնպես անկարող եղան երկար ժամանակ
կասեցնել թվով շատ ավելի գերակշիռ հա-
կառակորդի ճնշումը, կազակներին օդնելու

համար շուտով ուղարկվեցին հետհակի դուրսիմքեր:

Զակատը փրկելու համար հարկավոր էր լոնսային կիրճերից դաշտավայր դուրս գալ ըստ կարելվույն շուտ, որ և Շելկովսիկովն արեց, իր ջոկատը ճանապարհից դեպի ճախ շեղելով և զիսլի կողքի նեղ կիրճը ուղղելով, որ դուրս էր գալիս Ալաջա գյուղը, որտեղից արդեն արագ կերպով կարելի էր Արփաչայի հարթավայրը հասնել: Այժմ խնդիրն այն էր, որ պետք էր արագ կերպով դուրս գալ այդ նեղ ու երկար կիրճից: Շելկովսիկովի այս մաներն անսովուսելի էր թուրքերի համար, որոնք ենթադրում էին, թե նա իր ճամբարը կվերադառնա այն ճանապարհով, որով զնացել էր մինչև Նախարչի Մանելով այդ կիրճը, Շելկովսիկովի ջոկատը կղըլգուլի թուրքական ջոկատից թաքնվեց բարձունքների ետևում ու այլևս նրա կրակից չտուժեց, ինչու պիս և հաշվի էր առել Շելկովսիկովը: Սակայն ջոկատի վերջապահ մասին, չնայելով նրա հերոսական կավին, չհաջողվեց թուրքերին կանգնեցնել, որոնց վերջ ի վերջո հաջողվեց

Ներխուժել կիրճը։ Զոկատի գրությունը
չափազանց ծանրացավ։ Կիրճի վրա հա-
կառակորդը կապարի անձրև էր տեղում։
Զորամասերն իրար էին խառնվել կո-
րուստներն ավելի ու ավելի էին մեծա-
նում։ Բայց Շելկովսիկովն այն հրամանա-
ստրներից չէր, որ մարտի զեկավարման
երասաններն իր ձեռքից բաց թողներ-
նա հրետանավորներին հրամայեց շուապ
օդնության հասնել վերջապահ զորամասին,
որ և նրանք կատարեցին։ Հրետանու սպա-
պորուչիկ Բեկտաբեկովը, ծագումով հայ-
համարձակ կերպով առաջ մղեց իր լեռնային
թնդանոթները և սկսեց իր վերջին արկերուվ
գնդակոծել վրա տվող հակառակորդին։ Բեկ-
տաբեկովի հրետանու կրակը թուրքերին
կանգնեցրեց և ջոկատին հնաբավորություն-
տվեց դուրս գալու կիրճից։ Այդ գործողու-
թյան համար Բեկտաբեկովը պարզեատրվեց
Դեռքեսկի գորդ աստիճանի խաչով։ Ինչ
վերաբերում է Կղզլգուլի թուրքական ջոկա-
տին, որ նետվել էր Շելկովսիկովի զորքե-
րին հետապնդելու, իրը վերջիններ

արդեն կիրառութեան էին, ապա նրան չհաջողացեց այդ ջոկատին հասնել, որովհետեւ նու ստիպված էր շարժվել դժվարանցանելի ձորակներով և մինչև գնում էր, Շելկով նիկովի ջոկատն արդեն դուրս եկալ Արփաշայի հարթավայրը, Անիի ավերակներից մի փոքր հարավու Դեպի թուրքական բանակի թիկունքը կատարված արշավի նույն մասնակիցը, որ գործուն մասնակցություն է ունեցել այդ օրվա կոփմսերին, ջոկատի նահանջը քողարկող մարտիկների խիզաւության ու անձնազոհության և զեներալ Շելկովիկովի՝ մարտը և զորքերի շարժումը մատորեն ղեկավարելու մասին իր հիշողություններում պատմում է. «Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի ներոսություն ու անձնազոհություն ցուցարերեցին նահանջը քողարկող զորամասերը, երես առերես կանգնելով հակառակորդի հանդեպ. . . Հերոսական գնդերի խիզախ ներկայացուցիչներին, որոնք բազմիցս եղել էին մարտերում և որոնց հատուկ էին ոխրագործությունները, զեներալ Շելկովիկովի կարգա-

զբությունների հետ մեկանդ, պատկանում
է ջոկատը փրկելու պատիվը, մի ջոկատ, որ
կարողացավ նահանջել այդ թակարդից
տանելով իր հետ բոլոր հրանոթները և
ոչինչ չթողնելով հակառակորդի ձեռքում:

Դուրս գալով դաշտավայր, Շելկովսիկովս
արդեն կարող էր մարտակարգ ծավալել, որ
և նա արագորեն կատարեց, պահանջեց
անհապաղ զինամթերք ուղարկել և պատ-
րաստ էր թուրքերին հականարկած տալուհ-
եթե նրանք փորձեին դաշտավայր իջնել ու
կովի բռնվիլ: Բայց թուրքերը լեռներից չի-
ջան և Շելկովսիկովի ջոկատը շարժվեց զետի-
իր ճամբարը — Կամբինսկի պահակակետը
ուր հասավ սեպանմբերի 21-ի լուսաբացին:

Այստեղ նրան սպասում էր բանակի
գլխավոր հրամանատարի հեռադիրը, որով
նա Շելկովսիկովին ու նրա մարտիկներին
շնորհակալություն էր հայտնում այդ
պահանձալի գործի համար և հաղորդում էր, որ
շրջանցիկ զորացյան նախարչիում երեալը
ընդհանուր ցնծություն առաջ բերեց զորքերի
մեջ: Այստեղ Շելկովսիկովս իմացավ նաև,

որ այդ օրը Սուբոտանում կանգնած դենելը ա
յազարել ցանկանալով նրա ջոկատը հեծե-
լազորով ուժիղացնել կողմանց ճանապարհով
նրա մոտ էր ուզարկել հեծելազոր, որը, սա-
կայն, ինախթափախիք վերադարձել էր,
որովհետև ջոկատն արդեն Նախարչիում չէր։
Այսպես հմտորեն ու սքանչելի կերպով
Շելկովիկովը կտտարեց իր վրա գրված օպե-
րացիան, որն այդ պատերազմի կովկասյան
հակատի ռազմական գործողությունների
ոլատմության փառավոր էջերից միկն է
հանգիստանում։

Իր մարտիկների քաջության և ռազմա-
կան գործողությունների արդյունքների մա-
սին նա զեկուցեց կորպուսի հրամանատարին.
«Նահանջը բարձունքից կատարվեց արտա-
սովոր հաջողությամբ։ Դիրքերում մնալը
ֆիզիկապես հնարավոր չէր եթե մի ժամ էլ
հապաղեինք, արդեն անհնարին կլիննը ետ-
քաշվել, որովհետև զլիավոր ուժերի կողմից
գործողությունների վաղ գաղարեցումը
թուրքերին հնարավորություն տվեց իմ զեմ
կհնարոնացնելու մեջ և ահարկու ուժեր...

ջոկատը գերբնական դժվարություններ կրեց
թեև, ցավոք որսի, անօգուտ։ Դիրքը զբա-
վեցի ժամը 8-ին, առանց կանգ առնելու գնա-
լով ամբողջ գիշերը։ այն թողեցի մոտ ժամը
 $3\frac{1}{2}$ -ին»¹:

Սեպտեմբերի 20—22-ին տեղի ունեցած
մարտերի հետևանքով թուրքական բանակը
թուլացել էր։ Ալաջայի բարձունքներում
նա երկար մնալ չէր կարող, որովհետև նրա
շարքերը կազմակուծվել էին և ցըտերն ար-
դեն վրա էին հասնում։

Թուրքական բանակի գլխավոր հրա-
մանատարը մտադիր էր քաշվել Սողանլուղի
մյուս կողմը՝ ձմեռն այնտեղ անցկացնելու
և իր բանակի շարքերը լրացնելու համար։
Թուրքական բանակին վճռական հարված
հասցնելու մոմենտը բարեհաջող էր, և ուռ-
սական հրամանատարությունը որոշեց հոկ-
տեմբերի սկզբին մի անգամ ևս գրոհել
Ալաջայում կանգնած Մուխթար-փաշայի բա-
նակի վրա։ Շելկովսիկովի կողմից դեպի

1 Տես՝ „Материалы...“ ժողովածուի „При-
ложение“, էջ 100։

հակառակորդի թիկունքը կատարված հաւ-
մարձակ շարժումը ակնառու կերպով ապա-
ցուցեց, որ Ալաջայի թուրքական դիրքերի
շրջանցումը միանգամայն հնարավոր է:
Ռուսական բանակի հրամանատարությունն
այդ հանգամանքը հաշվի առավ և որոշեց
այս անգամ ևս գրոհել երկու կողմից—ճա-
կատից և թիկունքից: Այս անգամ շրջան-
ցող զորասյան թիմն ավելացվեց: Զորա-
սյան հրամանատարը գեներալ Լազարեն էր,
իսկ եթե սա շարքերից զուրս դար, նրան պի-
տի փոխարիներ Շելկովնիկովը, որ Լազարեի
պորքի գրոհող ջոկատներից մեկի հրամա-
նատարն էր: Շելկովնիկովը շրջանցիկ ջո-
կատը գնաց մի փոքր ուշ, այն ժամանակ,
երբ ջոկատն արդեն ճանապարհին էր, իսկ
Լազարեը՝ Դիկորում: Տարածությունը Ղա-
րոյալի (որտեղից Շելկովնիկովը մեկնեց
Լազարեի մոտ) և Դիկորի միջև 60 վերստից
ավելի էր: Ռազմական պատմաբան Պոտտոն
պատմում է, որ Շելկովնիկովը զեպի Դիկոր
ճանապարհից առավոտյան ժամը 6-ին,
իսկ արդեն ժամը 10-ին գեներալ Լազա-

ըեից հեռագիր ստացվեց, թէ Շելկովսիկովը
հասել է նրա մոտ: «Թէ ինչպես Շելկովսի-
կովը կարող էր այդ տարածությունը սլա-
նում ավելի պակաս քան չորս ժամում,—գլ-
րում է Պոտոռն, —այդ միայն նրան է հայտ-
նի: Ամենայն հավանականությամբ՝ նա ոլ-
լացել է կարճ ճանապարհով, ուզգակի թըշ-
նամու ուղեկալներով, բայց և այս գեպքում
նա պիտի ավելի քան 40 վերստ տարածու-
թյուն անցներ»¹:

Սեղտեմբերի 30-ին Լազարել Դիզորումն
էր. հոկտեմբերի 1-ին նա հարկադրված
էր այդտեղ մնալու, որպեսզի ետ մնացած
գումակը գա հասնի իրեն և մարտիկները
ժամանակ ունենան հանգստանալու: Հոկ-
տեմբերի 2-ին Դիզորից նա դուրս եկավ
և մարտով գրավեց սորատեղիսական կարե-
վոր նշանակություն ունեցող Շաթիլ-Օղլի
և Օրլոկ լեռները: Այդ լեռները փակում էին
Լազարեի զորացյան ճանապարհը դեպի Վի-
զինքեի բարձունքները, որոնք հանդիսա-
նում էին Ալաջայի թուրքական դիրքելի:

¹ Տե՛ս՝ Պոտոռյի հիշյալ հողվածը, էջ 330:

քանալին։ Շաթիր-Օղլին գրոհով վերցնեւ-
լուց հետո, թուրքերն ամրացան Օրլոկ լե-
ռան վրա, որն ավելի բարձր էր և ան-
մատչելի, քան Շաթիր-Օղլին։ Այդ լեռան
գրոհի լրջությունը նկատի ունենալով, Լա-
զարել նրա գրոհի դեկավարությունը գրեց-
գեներալներ Շելկովսկովի և Յիտովիչի վրա։
Չնայելով թուրքերի կատաղի դիմադրու-
թյանը և խիստ կրակին, գերբենդցիների գու-
մարտակները և սակրավորները համառ
կերպով գնում էին դեղի նշված նպատակը։
բարձունքի դադաթը։ Ոչինչ չէր կարող
կօնդնեցնել ձեռնամարտի ձգտող այդ խի-
զախներին։ Ականատեսների պատմելով՝ դա-
մի փառավոր գրոհ էր։ Իրենց գնդի քայ-
լերգի հնչյունների տակ գերբենդցիներն
ավելի ու ավելի էին վեր բարձր անում և հա-
կառակորդին դուրս մղում իր ամրություն-
ներից և, վերջապես, հասնելով գագաթին,
հաստատուն կերպով գրավեցին այն։ Այդ
մարտերին ակտիվ մասնակցություն ունե-
ցավ այժմ արդեն շտաբս-կապիտան Բեկտա-
բեկովի հրետանին, որը գործում էր նույն-

չափ գերազանցութեն, ինչպես գործում էր մի
քանի օր առաջ՝ Շելկովսիկովի ջոկատի նա-
հանջի ժամանակ:

Հոկտեմբերի 3-ին ոռոսական հրամա-
նատարությունը զլիավոր ուժերի և շը-
ջանցիկ ջոկատի կողմից ընդհանուր գրոհ
էր նշանակել թուրքական բանակի՝ Ալա-
ջայի գիրքերի վրա: Գրոհը պատկվեց լիո-
կատար հաջողությամբ: Թուրքական բա-
նակը պարտվեց և Ալաջայից դուրս քըշ-
վեց: Շելկովսիկովն ամենատակտիվ մասնակ-
ցությունն ունեցավ այդ օրվա մարտական
գործողություններին: Նրա հրամանատա-
րության տակ գտնված զորքերը գրոհեցին
Վիպինքեի բարձունքներն ու գրավեցին
նրանք: Մարտի ամբողջ ընթացքում նա
գտնվում էր կրակի տակ, ընդ որում նրա-
նից ոչ այնքան հեռու ոլայթած արկից
մի կողմ էր նետվել: Մեպահմբերի 20-ի
փառավոր մարտի և հոկտեմբերի 2-ի ու 3-ի
մարտերում ունեցած ակտիվ մասնակցու-
թյան համար Շելկովսիկովը սկարգեատրվեց
Դեորդեսկի 3-րդ աստիճանի խաչով:

Ալաջայի մոտ տարած հաղթանակից
հետո սուսական բանակը շարժվեց դեպի
երզրում։ Ռեժիդ ամբացված Դավա Բոյուն
գիրքը, երզրումի նախադռուք, կատաղի
կրվից հետո սուսական բանակը զրտվեց,
բայց երզրումի գրոհը հաջողություն չու-
նեցավ, և հարկ եղավ քաղաքը պաշարել
տարվա ամենախիստ եղանակին։ Այս-
պիսով, Սովանլուղի լիոնաշղթան անցած
սուսական զորքերը, զժվարանցանելի ճա-
նապարհների ոլատճառով, որոնք տարվա
այդ ժամանակ արդին ծածկված էին ձյու-
նով, կտրվեցին իրենց մատակարաման բա-
զայից և վերին աստիճանի ծանր գրություն
մեջ ընկանա Հնաբառվորություն չկար իր
ժամանակին և անհրաժեշտ քանակությունը
բերել տալ ոլարեն և գեղօրացք։ Անհրա-
ժեշտ էր արագ կերպով տեղում կարգավո-
րել Սովանլուղի մյուս կողմում ձմեռող
զորքի մատակարարումը, որ զգալի չափով
կթեթիանար, եթե այդ վայրերի բնակչու-
թյունը հսնգատանար և անցներ իր խաղալ
աշխատանքին։ Անհրաժեշտ էր նոն բարե-

լավել գոսալիտաների աշխատանքը, կազմակերպել փոստն ու հեռագիրը։ Այս բոլոր անհետաձգելի խնդիրներն արագորեն իրականացնելու նպատակով կազմակերպվեց էրզրումի ժարդ, որի հառավարիչ նշանակվեց գեներալ Շելկովնիկովը։ Իրեն հատուկ եռանգով նա ձևանամուխ եղավ այդ ծանր աշխատանքին։ Իր նշանակվելու առաջին խելօրից նա շրջեց ամբողջ մարզը և կարողացավ հենց տեղում բավականաչափ պարեն հավաքել զորքերի համար։ Բայց նրա գործունեությունն այդ բնագավառում երկար չտևեց։ 1878 թ. փետրվարի 10-ին, ոռոսական զորքերի էրզրում մտնելուց մի օր առաջ, նա վախճանվեց բծավոր տիֆից։

Այդպիսին էր Շելկովնիկովը, որին զինվորները վստահում և սիրում էին նրա քաջության և նիփլախության համար։ Զուրչեր, որ նրա արշավանքներին մասնակից մարտիկները նրա մասին ասում էին՝ «Շելկովնիկովի հետ չես կորչի»։

Իրենց քաջ նախնիների զործերը չեն մոռացել նայ ժողովրդի գավակները, որոնք

այժմ, Սովետական Միության մյուս ժողովությունների զավակների հետ ուսումնական առողջապահության համար առաջարկ է առաջնային առողջապահության համար գործադրությունների մասին օրենքը՝ գերմանական զավթիչների դեմ։ Փառավոր քիչ գործեր չեն կատարել քաջարի հայ ուազմիկները Հայրենական մեծ պատերազմում և դեռ էլի շատ փառավոր գործեր կկատարեն նրանք, անդադրում ոչնչացնելով գերմանական խմբերի կատարելուն։ Հայ ժողովրդի այդ ոխերիմ թշնամիներին։



Академия Наук Армянской ССР

Институт Истории

Боевые подвиги сынов Армении

А. ЭЛЬЧИБЕКЯН

ГЕНЕРАЛ-МАЙОР

Б. М. ШЕЛКОВНИКОВ

(На армянском языке)

Изд АН Арм. ССР, Ереван

Գ.Ֆ. 01395, Գալավեր՝ 307, Հրամ. 218, Տիրաժ 4000.
1,5 լ տպ., մամուլ, մամուլում 29720 տպ. նիշ:
Առողջապահ է ապագրության 6/IX 1944 թ.

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի 1-ին տպարտու

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0042057

[204]

ԳՐԱՎ. Տ. Թ.

